

## ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆ

### ՀԱՏՎԱԾՆԵՐ «ՆԱՎԼ ԼԵՌԱՆ ՎՐԱ» ՎԵՊԻՑ

Գնացքը շմեկնեց: Սարդարաբաղից քիչ  
հեռու երկարուղածերը պայթեցրել էին...

Ուղևորները գիշերեցին կայարանում:

Մույզը ցրվում էր, երբ ևս ամպեր կուտակ-  
վեցին Հայաստանի վրա...

Կայարանում, քամու արագությամբ լուր  
էր շրջում թուրքական բանակի շարժումների  
մասին...

Երրորդ օրն էր... և գնացքը մնում էր տե-  
ղում: Ոչ ոք ոչինչ չէր իմանում...

Ուղևորներից շատերը ճանապարհ շա-  
րունակեցին սալերով...

Հերյանը որոշեց ամեն գնով հասնել Երե-  
վան...

Հինգերորդ օրը լուսաբացին խուճապ ըն-  
կավ կայարանում սպասող ուղևորների մեջ:

Հեռվից թնդանոթի խոլ ձայներ լավեցին:

— Ի՞նչ, է պատահել,— հարցրեց Հերյանը:

— Բա, չեմ իմանում, կոհիվ է... թուրքերը  
փորձում են նվաճել Արարատյան դաշտը...

Մի խումբ զինված մարդիկ մոտեցան կա-  
յարանին:

— Շատերը պնդում էին, որ վճռական  
ճակատամարտը մղվի Սևանում, — միշա-  
մուտեց մի ուրիշը, — սակայն ժողովուրդը չու-  
զեց, չուզեց որ մեր սուրբ դաշտը պղծվի, և  
ահա երեք ժամ է կովում ենք...

Սուաշին խրամատները:

Հայկական հրետանին հանգիստ չէր առ-  
նում: Գնացացիները անդադար կրակում էին:

...Զինքի բեկորներ, զգեստների պատրս-  
ված կտորներ, թիթեղի արկղներ, մի կողմը  
թեքված հրետանու անանիվ կառքեր, ուսմ-  
քեր, դատարկված փամփուշներ, ձիերի  
դիակներ...

Եկեղեցու նախակին խորանի վրա բժշկա-  
կան գործողությունների սեղան էր սարք-  
ված: Վարը պատահական բարձրություննե-  
րի վրա, հարմարեցրել էին երկու ո:րիշ աւ-  
դաններ:

Այդ ամենը կատարվում էր խոր, մերենա-  
կան լուսաթան մեջ: Հոգևած, սիրթանած երես-  
ներով թժշկների արյունած ձեռքերի վրա  
մի դոյլից ջոր էին թափում և նրանց քե-  
րանների մեջ վաղված ծխախոտ դնում:  
Նրանք մի քանի անգամ քաշում էին, նե-  
տում և արագ վերադառնում գործի:

Ամենինց շատ գրադարձները ճերմակ հա-  
գած մի քանի կամաքը էին: Անդադար այլ-  
ուույս էին գալիս թժշկների շորջը, գոր-  
ծիքները եփում, վերքերը կապում, շտապ  
շտապ՝ կեր որոշում թոշունների նման աչ ու  
ճախ վազում և նորից գնում իրենց տեղը:

Դժգույն դեմքով, ճերմակ հագած մարա-  
պետներ արյունալի պատարագներ էին մա-  
տուցում չար և ուսերիմ աստվածներին: (Հի-  
նավուրց խորանի վրա երկարած մարդկանին  
շարշապած այդ մարմինները արդյոք ահա-  
վոր գոհարերություններ չեն, և նրանց  
շորջը պտույտ եկող լուկլաց այդ մարդ-  
կանց և կանանց շարժուձները մաս չեն  
կազմում խորհրդավոր այն արարողության,  
որի գաղտնիքը անըմբունելի էր)...

Նոր վիրավորներ էին բերում:

Ամեն կողմ լոդոփորմ էին սրսկում: Պա-  
տերի հետև, խոզ ոռնոցով ուսմբեր էին  
պայթում: Գետնին պառկած վիրավորները  
մղկտում էին:

— Չուր, ջուր,—չորացած շրթները շարժելով խնդրում էին շատերը:

Ումանք տերում էին, ումանք խրստում:

Այն օրը Սարդարաբատը գոռաց և վայեց:

Հայ ժողովրդի բոլոր խավերը վիթխարի և վճռական թափով որոշել էին թշնամուն եւս մղել:

Սուան խրամատների մեջ: Պատուած, եւացող վերքերով մարմիններ կրեցին: Աշխատանքը այնքան շատ էր, որ Հերլանը ուժապատ էր եղել, ծնկները դողում էին, շրթները չորացել էին:

Խլրող կոկորդներ, խոլ վայոցներ, ծանր տնօղոցներ:

Արյունի, լոդոֆորմի, ացետիլենի և թթվածի հոտը լցրել էր ճակատամարտի վայրը: Արարատը՝ մի կողմ քաշված՝ անտարքեր հատում էր: Երկնքի վրա կապարէ ամպեր էին կախվել: Թեյթ քամի էր փշում:

Դրսից դիտված՝ կրիվ շարունակվում էր անողոր, անանուն, մեքենական: Հրամանները հնչում էին չոր, կտրուկ, և մարդիկ կատարում էին այդ հրամանները վարժ, արագ շարժումներով, առանց հոգումի, սառնասիրու, համառ:

Խրամատներից դորս էին վազում, առաջ նետվում, պառկում:

— Կրակ...

Կրակում էին:

Գնդացիրները ջղայնացած տրաքտրացում էին, թնդանոթները վայելով աղմկում: Անապատի կարծի հողերը վեր էին թոշում, հառաշելով պտույտ գալիս, թափվում:

Ծոխ, կրակ, երկար:

— Հարձակման պատրաստ...

Թողնել թուրքերին որ մտնեն Արարայան դաշտու:—Այդ երեքը: Սի Եպիսկոպոս, խաչը ձեռքին, գնդակների տարափի տակ, խրամատից խրամատ էր անցնում և վառ ու պարզ խորքերով այդ հիշեցնում հայերին:

Հայերը կրվում էին կատաղի կերպով:

Երկաթգծի հողաթմբի պատճեղի ետևից գնդերը դորս ենտվեցին և, դիմացի բլուրների վրա ամրացած թշնամու գնդակները արհամարթելով, համարձակ առաջ անցնեն և գրավեցին նոր դիրքեր: Հետևի հրետանին արագ տեղափոխվեց, և կրակը սաստկացավ:

Անգես թվաց, կարծես ամբողջ դաշտը հանկարծ կատաղած տեղից շարժվել էր և ցաստով լցված՝ նետվել առաջ:

Թուրքերը այդպիսի դիմադրության չեն սպասում:

— Պարու գնդապես, գործերը ո՞նց են գնում...

— Լավ: Թուրքերը ես են քաշվում...

Ան, Աստված, թուրքերը ես են քաշվում...

Հիմա բավականին պետք էր քայլել հասնելու համար նոր բռնած դիրքերին: Ահա հեռուն գնդերը շարժվում էին: Հրետանու մասերը անդադար տեղափոխվում էին: Թուրքերը հեռացել էին դիմացի բլուրներից:

Հայ գյուղացի տղաները՝ ծանրաշարժ, պնդակազմ՝ պատահական փուերում շարքով պառկած անդադար կրակում էին: Ապա, հազիվ հրամանները հնչում էին, հրաճ վեր էին ցատկում և ծանր կոշիկները գետնին խփերով վազում էին առաջ, մագլցում թմբերը, ծածկվում քարերի ետև և շարունակույն կրակել:

Դաշտը դրդապով ունում էր:

Թնդանոթները, որոնց առաջ մրոտած դեմքով մարդիկ բորբոքի նման միօրինակ շարժումներ էին անում, կրակում էին, աղաղակելով ես քաշվում, նորից կրակում:

Երբեմն, նրանցից մեկը հանկարծ գամվում էր իր տեղը, աղոցած ծանի նման երերում և փսփում գետնին:

Պատահում էր, որ ոսմբը ընկնում էր ամբողջ մի խմբի մեջ. ձյունամբրիկի նման պտույտ էր գալիս, ամեն ինչ կոտրտում, ծամում և ողջ հանելով աղմուկով վայր թափվում: Մեկ էլ տեսնում էին, ինչպես պեղված բողի և ձյունի միջից, մեկը վեր էր ցատկում, բազուկները ճունելով, յնենթացած վազում և, տաք քայլ հեռու, երեսի վրա երկարում:

Կամ այնուղի, որ քիչ առաջ քրմական շարժումներով լցնում էին թնդանոթը, հողերը մխամ էին և մի կոտր ծանր լուսթուն պիտու թիթեղի արկեների, կոտրատված անհյուների, մարդկային մարմնի կոտրների և անասեղի տակնուրայության վրա:

Ան, Աստված, թուրքերը ես են քաշվում...

Ան Աստված, թուրքերը ես են քաշվում...

...Գնդակները շարունակում էին սովել:

Գիշերը Էջմիածնի զանգակները դողանչում էին:

Հայերը մեծ հաղթություն էին տարել: Ամբողջ հայ ժողովորդը մեկ մարդու պես ուղի էր կանգնել, նետվել մարտի դաշտ և հեռուսար թշնամու վտարել Արարատ անդադար դորս: Այդ հաղթությունը հայ աշխատավոր ժողովրդի հաղթանակն էր: